

ԿՐՈՆԱ—ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Բ-Ի ՔԱՐՈԶԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ամէն»:

«Մահկանացու ծնեալ, անմահ զիւրն յիշատակ եթող»:

Այս բառերը քաղված են մեր պատմահոր՝ Մովսես Խորենացիի «Հայոց Պատմության» գիրքեն, այն հատվածեն, որուն մեջ կխոսի, կնկարագրե և կպանծացնե անձը հինգերորդ դարու տիտանյան մեծությամբ ծանոթ և մեր պատմության բոլոր դարերուն վրա իր կնիքը թողած, իր վճռական դերը խաղացած մեծագույն հայրապետներեն Սահակ Պարթև Կաթողիկոսի մասին:

Փետրվար 18-ին, շաբաթ օր, Հայաստանյայց բոլոր եկեղեցիներու մեջ՝ այստեղ ի Հայաստան և ընդհանուր աշխարհի մեջ մեր Եկեղեցին մեր ժողովուրդի գիտակցությանը և կյանքին մեջ վերստին արթնցուց, կյանքի կոչեց, լույսի տակ դրավ այդ շքեղագույն դեմքը մեր պատմության, որ ամբողջ հինգերորդ դարը, մեր ոսկեդարը կամարող սքանչելի անունն է Սահակ Պարթև Կաթողիկոսը:

Բոլորս ալ գիտենք, որ Ե դարը ինչ մեծ նշանակություն ունեցող դար է մեր հազարամյակներու պատմությանց, եզակի դարն է, անկրկնելի դարն է, որուն մեջ մեր անմահության ճամփան բացվեցավ Քրիստոսի բացած ճամփուն մեջ, հայուն շառավիղը բացվեցավ դեպի անմահություն: Այդ ճանապարհի բացումը եղավ հայոց գիրին ստեղծումը և Աստվածաշունչ մատյանի թարգմանությունը և անոր հետևող մեր սեփական, յուրահատուկ, հայադրոշմ, ինքնատիպ գրականության սկզբնավորումը: Ճիշտ է, մենք առաջին դարեն, առաքելական դարեն քրիստոնեությունը ճանչցած ժողովուրդ էինք, ավելի ճշգրիտ բացատրությամբ մենք առաջին դարում Թադեոս և Բարթողիմեոս առաքյալներու սերմնացանությամբ Քրիստոսի քարոզչության Ավետարանի ճշմարտության սերմերը մեր Հայաստան հողի վրա ցանված տեսած ենք: Այդ քրիստոնեությունը անխափան շարունակությամբ հասավ մինչև Գրիգոր Լուսավորիչ, որ պաշտոնապես արքային հետ, հայոց Տրդատի հոչակեց քրիստոնեությունը իբրև պետական կրոն, ազգային կրոն: Բայց պաշտոնական էր այդ, ժողովուրդի վերնախավին հասած կրոնք

մը, ժողովուրդի կյանքին մեջ տակավին չշաղախված կրոնք մը: Եվ այս պատահեցավ: Եթե պաշտոնականացավ մեր Եկեղեցին Դ դարի առաջին տարին՝ 301թ.-ին, քրիստոնեությունը հայացավ, տարրացավ, շաղախվեցավ, միականգնեցավ մեր հոգիին, մեր միտքին, մեր սիրտին մեջ, մեր կյանքին մեջ արտահայտվեցավ իբրև «գոյն ի մորթոյ» և ոչ թե «հանդերձ ի վերայ մարմնոյ»: Դարձավ մեր կաշիին, մեր մորթին գույնը, մեր արյան մեջ շաղախվեցավ, և ինչպես կըսե պատմիչը՝ Սուրբ Մեսրոպի կենսագիրը Կորյուն, «աքանչելի եղեւ աշխարհն Հայոց», և հանկարծ Աստվածաշունչ մատյանը Հին Կտակարանով, մարգարեական կազմով և առաքելական դեմքով և համայն Ավետարաններով հայաբարբառ և հայախոս դարձավ:

Երբ Աստված մեզի մոտեցավ, երբ մենք սկսանք իրեն աղոթել, երբ այլևս քրիստոնեության ու հայության միջև անջրպետ չմնաց, բաժանման գիծ չմնաց, քրիստոնեությունը օտար կրոնք մը չեղավ մեր ժողովուրդին համար, Քրիստոնեությունը Պաղեստինեն չհնչեց, Բեթղեհեմեն չարձակվեցավ, Գողգոթայի բարձունքեն չհասավ, այլ Սուրբ Էջմիածնեն, այս Իջման Սեղանեն, հայոց կղզիներեն, հայոց դաշտերեն, հայոց հոգիներեն: Աստված այլևս դարձավ մեր Աստվածը՝ Աստված հարցն մերոց:

Եվ այդ մեծ հրաշքին, մեր պատմության բարձրակետին ճարտարապետները եղան Սահակ Հայրապետը, Պարթև և Մեսրոպ Մաշտոց: Առհասարակ թե՛ մեր հոգևորականության կողմեն և թե՛ մեր մտավորականության կողմեն, երբ կխոսվի Ե դարու մասին, սևեռակետի տակ կդրվի Մեսրոպ Մաշտոցի անձը: Դա ճիշտ է: Բայց ոչ այնքան ճիշտ, որ ստվերի տակ թողնվի Սահակ Պարթևի տիրապետող, կամարակապող անձին, հովանավորող անձին, քաջալերող անձին, շարժումը ղեկավարող անձին կերպարը:

Այսօր կուզեմ, որ այդ կերպարը պայծառապես շողա մեր գիտակցության մեջ, որովհետև, ինչպես կըսե Ե դարու պատմիչը և իր աշակերտը՝ Մովսես Խորենացին, մահկանացու ծնավ, բայց անմահ ըրավ իր հիշատակը և զայն թողուց մեզի իբրև անմահության վկայություն: Եվ եթե երբեք անմահ հիշատակ թողած չըլլար, ինչո՞ւ այսօր ես իր մասին պիտի խոսեի ձեզի, ինչո՞ւ ուրիշներ պիտի գրեին իր մասին: Սիրելի հավատացյալներ, ինձի համար երկու տեսակ մարդ գոյություն ունի. այն մարդը, որուն կյանքը երբ կվերջանա, այդ կյանքին անունը խոտ կըլլա կամ ժանգ, և մյուս տեսակ մարդը, որ ան մյուսին նման մահկանացու կծնի, բայց իր կյանքը կապրի մահվան վրա իբրև տարված հաղթանակ, և իր կյանքը չի վերջանա իբրև խոտ ու ժանգ, այլ մեր կյանքին մեջ կտարածվի, կվերընձյուղվի ամեն տարի, երբ զինքը պիտի ըսենք իբրև անմահության խոսնակ, անմահության հուշարարը, կյանքի դասատուն, արժեքներու բաշխիչը մեզ բոլորիս:

Անոնք են, որ պատմություն կկերտեն: Եվ պատմակերտ այդ դեմքերուն մեծագույններեն մեկն է Սահակ Պարթև Հայրիկը: Ու տեսեք, թե ինչ կըսե պատմիչը: Մենք աղբյուրը կքաղենք Խորենացիեն և Փարպեցիեն: Զավակն էր Ներսես Մեծին: Իր մեծ հայրը՝ Գրիգոր Լուսավորիչը եղած է, ինչպես մեր պայծառիմաստ պատրիարքներեն Օրմանյանը կըսե, մեր պատմությունը խորաթափանց կերպով դիտող, վերլուծող և անոր մեջեն հատակություններ հանող մեծ պատմաբանը, Օրմանյան պատրիարքը կըսե «լուսավորիչ հոգվոց» իր մեծ հայրը՝ Գրիգորը: Իր հայրը եղավ լուսավորիչ՝

սրտից և ինքը դարձավ լուսավորիչ մտաց: Հոգի, սիրտ և միտք. ամբողջությունը մարդուն լուսավորվեցավ:

Եղավ մեծ հմտության տեր անձ... ուսումը շարունակեց և կատարելագործեց այդ օրերու ուսմանց բարձրագույն կեդրոնը եղող Բյուզանդիոնի մեջ: Բայց եկավ իր հայրենիքը, կյանքը շաղախեց իր ժողովուրդի կյանքին հետ և վաթսուն աշակերտներ իր շուրջը համախմբեց և առաքելական բարիության գործին նվիրվեցավ գավառե-գավառ, քաղաքե-քաղաք, գյուղե-գյուղ երթալով և ժողովուրդին մեջ Աստվածաշունչ տարածելով, Քրիստոսի կյանքին մեջ շաղախելով:

Եվ տեսեք պատմիչը ինչ կըսե. «ստացաւ աշակերտս վաթսուն, որք» կրոնավորներ էին, խարանազգեստ հագուստով կպտտեին, երկաթապատ կոշիկներ ունեին, իսկ հաճախ բոբիկ կշրջագայեին, որոնք «հար ընդ նմին» կշրջեին՝ կաթողիկոսի շուրջը կպտտեին և որոնք մշտնջենավոր պաշտամունք կկատարեին եկեղեցական ծիսական կանոններու համաձայն անոնց նման, որոնք վանքերու մեջ կապրեին և ինքը «հոգայր զաշխարհս մեր», ժողովուրդին հոգը կտաներ անոնց նման, որոնք աշխարհի մեջ կապրեին:

Վանք ու աշխարհ, աղոթք ու կյանք, ճշմարտություն ու փորձ:

Եվ տարածեց քրիստոնեությունը մեր ժողովուրդին մեջ: Հավաքեց երիտասարդներ՝ ուշիմ, քաջ, փափկաձայն և երկարոգի, կըսե պատմիչը, համբերություն, տոկունություն ունեցող երիտասարդներ հավաքեց, դպրոցներ բացավ և անոնց ուսման մեջ զարգացման բոլոր պայմանները հայթայթեց: Այսպիսի դեմք մը Սահակ Կաթողիկոս Պարթևը, ինչպե՞ս այսօր մնա մեզի համար անծանոթ: Մեր ժողովուրդը ավելի մեղք կգործե, իմ հայեցողությամբս, եթե երբեք իր մեծերու հաղորդներեն կտրվի: Ի՞նչ պիտի զգաք դուք, եթե երկնքի աստղերուն կնայիք, երբ ցերեկվան արևու լույսը մայր կմտնե: Այդ աստղերու, անհամար աստղերու մեջ այնպիսի պայծառաշող աստղեր կան, որոնք մեզի հույս կուտան, գիշերվան մեջ լույսի գաղափարը կուտան և մեզ լույսեն չեն կտրեր, երբ արևը չկա:

Այսպես հայոց պատմության երկնակամարին վրա Սահակ Կաթողիկոս ուրիշ կաթողիկոսներու, սուրբերու, նահատակներու, վարդապետներու, հերոսներու նման լույս կցանե մեզի համար: Այսօր եկած ենք այստեղ. բոլոր այն հավատացյալները, որոնք կերթան հայ եկեղեցի այսօր, այդ լույսին շողերեն կլեցվին, կլիցքավորվին, ուժ կառնեն:

Համեստ ապրեց, պալատի մեջ չապրեցավ, շողշողուն զգեստներ չհագավ, համադամ կերակուրներ չկերավ: Ինչ փույթ: Անոնք ի՞նչ կարժեն: Իր կաթողիկոսությունը ժողովուրդի ծառայության մեջ արժեցուց և անով արժեվորվեցավ և անով է, որ իր հետքը թողուց պատմության մեջ, և այդ հետքը չի ջնջվեր, մինչև հիմա չի ջնջված՝ մինչև այս դարը, և չպիտի ջնջվի այնքան ատեն, որքան հայությունը կապրի, և ես կհավատամ՝ հավիտյանս չպիտի ջնջվի, որովհետև հայությունը հավիտյանս պիտի մնա:

Ահա այս գիտակցությամբ, եղբայրներ, իմաստության, ժողովուրդի նվիրումին, ժողովրդանվեր կյանքին հերոսը՝ հերոս տիպար մըն է Սահակ Հայրապետը: Եվ տեսեք իր իմաստությունը, տեսեք իր խորությունը. աքսորվեցավ պարսից իշխանության կողմե հայ նախարարներու դրդումով, 51 տարի կաթողիկոսություն վարեց, որուն մեծ մասը աքսորի մեջ անցուց: Վաղարշապատեն աքսորվեցավ Բագրևանդ գավառը. եկան իր մոտ նախարարները հայոց և Արտաշես թագավորին դեմ բողոքներ ներկայացուցին: «Զավակներս,— ըսավ,— գիտեմ, այո, թերություններ ունի մեր թագավորը,

բայց մերն է»: Այս բառերը թող մնան իմաստության իբրև ոսկեգիր բառեր մեր բոլորի գիտակցության մեջ: Եվ ըսավ Հայրապետը իր սեփական բառերով. «Ոչ է պարտս փոխանակել զախտացեալ ոչխար ընդ առողջ գազանի, որոյ առողջութիւնն է մեզ վնասակար»: Որովհետև անոնք կուզեին, որ պարսիկ մարզպան գա Հայաստանի մեջ. մի՛ ընեք, մտիկ չընին: Եվ ինք աքսորվեցավ, գնաց, բայց իր իմաստությունը մնաց և կմնա մինչև այսօր:

Եղբայրներ, քույրեր, անցյալի մեծ դեմքերուն ոգեկոչումը ինչո՞ւ համար կընենք: Ինչո՞ւ ես այսօր ձեզի կխոսիմ Ե դարի մասին, որովհետև կյանքը ընթացք մըն է ժամանակի տևողության վրա ու աշխարհին երեսին, որուն երեկը այսօր է, այսօրը վաղ պիտի ըլլա, և պատմություն ըսվածը այն ոսկի շղթան է որ ժամանակներուն վրա անմահության երգը կերգե: Եվ այսօրվա երգիչը այդ անմահության Սահակ Կաթողիկոս անունն ունի: Ու մենք եկած ենք անմահության համերգին այս տաճարեն ունկընդրության:

Իմ ամբողջ աղոթքս է, մաղթանքս է, որ մե՛նք հոգևորականներս, որևէ մեկ աստիճանի վրա գտնվինք, դո՛ւք, ժառանգավորներդ հոգևոր ճեմարանի, երիտասարդներ, համալսարանական ուսանողներ, այսօր դուք եք այդ վաթսուն աշակերտները, որոնք իրենց Հայրապետին շուրջը բոլորված պետք է որ մեր անկախ քրիստոնեության շունչը տարածեն իրենց կյանքը տալով և ոչ թե իրենց ուղեղին խելքը տալով: Քրիստոնեական ծառայություն չկա իբրև միտքի, գաղափարի փոխանցում, քրիստոնեական ծառայություն կա իբրև անձի մատաղ անումը իր ժողովուրդին: Եթե կյանքովդ չպիտի ապրիս, կյանքովդ պիտի չքարոզես, խոսքդ ի՞նչ արժե: Խոսքի վաճառականները շատցեր են Հայաստանի մեջ, խոսքի վաճառականները, որոնք Ավետարանին անունը կշահագործեն, ինչպես մարդիկը, որ ծերացած են և անոնց խոսքը տեղ չի գտներ, որովհետև կյանք չէ իրենց խոսքը:

Հիսուսն ի՞նչ ըսավ. նայեցեք մեր Տիրոջը. «Ես եմ ճշմարտությունը, ես եմ ճանապարհը, ես եմ կյանքը»՝ ճամփան ես եմ՝ Աստված է ճամփան: Երբ Աստված մարդու մեջ կներկայանա, մարդու մեջ կառկայանա, այդ մարդը կդառնա անմահության գնացքին իբրև հետևող աստղ: Եկեք, հետևաբար, Սահակ Հայրապետին այս տոնին մեր Հայաստան աշխարհի մեջ, որ Աստված մեզի շնորհ ըրավ և անկախությունը տվավ շնորհ հայաբան, հայրենադրոշմ, հայրենի պետություն շնորհեց մեզի, եկեք բոլորս, բոլորս անխտիր, ուր ալ ըլլանք, մեր կյանքերը խառնենք այս մեր հայրենիքի կյանքին, որպեսզի երբ օր մը գա վայրկյանը բոլորիս, մահկանացուի մեր ճակատագրին վերջին պահը գա, մեր հողին վերադառնանք, չմնանք, չըլլանք խոտ ու ժանգ, այլ լույս տանք մեր Հայաստան աշխարհին, մեր հայ ժողովուրդին, ինչպես այդ լույսին վերջին և այնքան պայծառաշող վկան եղավ երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսը:

Սիրելիներ, քալեցեք իրենց կյանքը, քալեցեք ձեր հայրերի կյանքը: Թող Սահակ Հայրապետին օրհնությունը, շունչը, պատգամը, կյանքին օրինակը դառնա ձեզի համար առօրյա հաց, անմահության հաց Աստծո փառքին, մեր Եկեղեցվո պայծառության և մեր ազգին շինության ու հայրենիքի ամրության համար, հավիտյանս հավիտենից: Ամեն: